

ՀԱՆՈՒՆ ԲԱՐԵԳՈՒԹ ԵՒ ՈՂՈՐՄԱԾ ԱՍՏՈՈ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀՈՒՓՍԻՄԵ ՎԱՅԵՒ ԹՈՐՄՅԱՆԻ

«ԱՆՁԻ ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ  
ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ» թեմայով

Ժ.02.02. -«Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»

մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հայտնի է, որ հայ-իրանական լեզվամշակութային առնչությունների բնագավառում միջազգային մասշտաբով կատարվել են հսկայածավալ գիտահետազոտական աշխատանքներ՝ հաստատելով հայագիտության և իրանագիտության փոխկապակցվածությունը: Նկատի առնելով այն կարևոր իրողությունը, որի համաձայն լեզուն համարվում է մշակույթի ամենակարևոր հատկանիշն ու ցուցանիշը, ընտրած թեման՝ «Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքներն արդի հայերենում և պարսկերենում» կարևոր քայլ է խորքային մակարդակով ուսումնասիրելու հայ-իրանական լեզվամտածողության, լեզվաոճական առանձնահատկություններն ու փոխաբերական այլաբանական բառակապակցությունները: Նման գիտահետազոտական աշխատանքները, պարզաբանելով դարձվածաբանական փոխաբերական հասկացությունները, կարևորվում են նաև գրականագիտական, գեղագիտական, ազգագրական և, անշուշտ, միջմշակութային հաղորդակցման և փոխըմբռնման տեսանկյունից:

Հատկանշական է, որ հենց սկզբից դրական տրամադրվածություն է ստեղծում ատենախոսի ինքնավստահ պահվածքը՝ կատարելու համեմատական ուսումնասիրություն հայ և իրանական լեզվամտածողության շերտերը ուսումնասիրելու և հատկապես *անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների առանձնահատկությունները* պարզաբանելու առումով:

Գրախոսվող թեկնածուական ատենախոսության բովանդակությանն ու կառուցվածքին, տեսական և գիտական մոտեցումներին ծանոթանալիս միանգամից զգացվում է գիտական ղեկավարի հզոր ձեռքը, նրբանկատ և ուշադիր վերաբերմունքը:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ընդ որում, կառուցվածքում ներառված հարցադրումների հիմնավորված ընտրությունը հնարավորություն է տվել ապահովելու պատշաճ համալիր հետազոտություն:

Ներածության երկու ենթաբաժիններում շոշափվում են հետևյալ հարցերը՝  
1. Դարձվածքի ըմբռնումը լեզվաբանական գրականության մեջ, որտեղ հեղինակը ուսումնասիրում է լեզվաբանների թեմային վերաբերող տեսակետները: 2. Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների բնույթը:

Առաջին գլուխը վերնագրված է «Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների իմաստային-թեմատիկ խմբերն ու միջկապակցական իմաստներն արդի հայերենում և պարսկերենում», որտեղ առանձնացվել են անձի արտաքին ու ներքին հատկանիշներ արտահայտող կապակցությունները: Սնձի արտաքին հատկանիշներ արտահայտող դարձվածքները առնչվել են անձի տեսքին՝ գեղեցկությանը, տգեղությանը, կազմվածքին, հասակին, իսկ անձի ներքին հատկանիշներ արտահայտողները բաժանվել են ըստ անձի ամենատարբեր հատկանիշների՝ մեծամտության, խոնարհության, քաջության, խելք և այլն: Ուսումնասիրվում են դարձվածային տարբերակները, հոմանիշ և հականիշ

դարձվածքները, ինչպես նաև արդի հայերենում և պարսկերենում անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների ձևաիմաստային հարաբերակցության հարցերը:

Երկրորդ գլխում ուսումնասիրվում են անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների կառուցվածքային տիպերն արդի հայերենում և պարսկերենում, իսկ երրորդ գլխում՝ քերականական առանձնահատկությունները, որտեղ թեմային վերաբերող ուշադրության արժանի քերականական դասակարգումների փորձ է կատարվել զուգադրվող լեզուներից մեջբերված օրինակների հիման վրա համոզիչ համեմատություններով ու մեկնաբանություններով: Ինչը մեկ անգամ ևս հաստատում է ատենախոսության գիտական բարձր մակարդակի և, անշուշտ, գիտական ղեկավարի նրբանկատ հայացքի մասին:

Աշխատանքն ամփոփվում է վերջաբանով և օգտագործված գրականության ցանկով:

Հեղինակը սույն թեկնածուական ատենախոսությամբ ներկայացրել է մի տպավորիչ, ծանրակշիռ աշխատանք, որն արժանի է ամենայն դրվատանքի: Ատենախոսությունը ընթերցելիս զգում ես, թե ինչպիսի հսկայական ջանք է գործադրել հեղինակը՝ առաջադրված հարցերը ամբողջ խորությամբ, գիտական պատշաճ մակարդակով քննելու համար:

Վերոնշվածի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքի նկատմամբ ունեք որոշակի նկատառումներ և դիտողություններ, որոնք կարելի է շտկել:

Աշխատանքը կատարելիս ատենախոսն օգտագործել է շուրջ 78 անուն հայերեն, ռուսերեն և պարսկերեն գրականություն՝ ներառյալ բառարանները, իսկ սակավաթիվ դեպքերում՝ նաև անգլերեն գրականություն: Օգտագործած գրականության և բառարանների գրակշռող մասը ռուսերեն է, որոնք օգտագործվել են հիմնականում ատենախոսության տեսական հատվածներում:

Ինչ վերաբերում է օգտագործված հայերեն և պարսկերեն գրականությանը, մեր կարծիքով, նման մակարդակով գիտահետազոտական աշխատանքի համար դրանք համեմատաբար քիչ են: Հեղինակը, հիմք ընդունելով թեմային վերաբերող սահմանափակ հայերեն և պարսկերեն բազան, այնուամենայնիվ կարողացել է իրականացնել իր աշխատանքի նպատակները:

Ատենախոսության 10-րդ էջում նշվում է. *«Ի տարբերություն հայերենի դարձվածաբանական ուսումնասիրությունների՝ պարսկերենի դարձվածաբանական գրականությունը համեմատաբար փոքրաթիվ է: ... Իրանցի լեզվաբանների՝ դարձվածաբանության վերաբերյալ տեսակետները սահմանափակվում են բառարաններում տրված մեկնաբանություններով»:* Հեղինակը իր այս համոզմունքը հիմնավորում է 1967թ. արտերկրում պաշտպանած թեկնածուական ատենախոսության հիման վրա:

Հարկ է նշել, որ թե՛ Իրանում թե՛ արտերկրում թեմային առնչվող և ուշադրության արժանի աշխատանքներ հրատարակվել են, որոնք հասանելի են նաև համացանցում: Քանի որ ատենախոսին հետաքրքրում է դարձվածաբանական գրականությունը, այստեղ հիշատակում ենք մի քանի օրինակներ, որոնց համեմատական ուսումնասիրության մի հատվածը նաև ռուսերեն է:

- Хадеми Могаддам М., Резаи М. СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПЕРСИДСКИХ ФРАЗЕОЛОГИЗМОВ С КОМПОНЕНТОМ ЧЁРНОГО И БЕЛОГО ЦВЕТОВ И ИХ РУССКИХ ЭКВИВАЛЕНТОВ. *Филологические науки в МГИМО*. 2018;4(16):114-119. <https://doi.org/10.24833/2410-2423-2018-4-16-114-119>.
- M. Khademi Moghaddam, M. Rezaei, (2018) COMPARATIVE ANALYSIS OF PERSIAN PHRASEOLOGICAL UNITS WITH A COMPONENT OF BLACK AND WHITE COLORS AND THEIR RUSSIAN EQUIVALENTS, *ФИЛОЛОГИЧЕСКИЕ НАУКИ В МГИМО, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ И ЛИНГВОКУЛЬТУРОЛОГИЯ*, No 16 (4). <https://doi.org/10.24833/2410-2423-2018-4-16-114-119>.
- Mireyla Ahmadi, Hadi Baharloo, Shahrbanoo Hatami (September 2020) Linguocultural analysis of phraseological units with the meaning «hospitality» in the Russian and Persian languages, *ФИЛОЛОГИЧЕСКИЕ НАУКИ В МГИМО*, 1 January, {Pages 103 }Philology at MGIMO 23(3):96-104. DOI:10.24833/2410-2423-2020-3-23-96-104.

- Samace, Seyed Mehdi. (2003). [farhang estelahate zabane makhfi], مخفی زبان اصطلاحات مرهنگ Hidden Language Glossary. (D. A. Sadeghi, Ed.) (First., p. 101). Tehran: Ghazal. Retrieved from <http://forum.p30world.com/showthread.php?t=559720>. Date Accessed:25 February 2013.
- «Russian phraseological units with the somatic component “heart” in comparison to their equivalents in the Persian Language», Department of Russian language Master of Science (M.S.) in Russian Language Teaching.

Աստօջին գլխի մեջբերված օրինակներում կան որոշակի թեական մեկնարանություններ: Օրինակ. կապիկի վերաբերյալ դարձվածքը պարսկերենում չկա, այլ կա ամբողջովին ուրիշ արտահայտություն: Կամ Naxorde Mast (բոց. Չիսմած՝ հարբել է) չի նշանակում «մեծամիտ», այլ՝ «անտեղի ուրախ, արագ արձագանքող»: Ru-yaš nemi-šavad (էջ 36. բոց. Երեսը չի բռնում) չի նշանակում «ամոթ չունի», այլ հակառակը՝ «ամաչում է»: Mesl-e mār-e zaxm-xorde (էջ 42. բոց. Վիրավորված օձի նման) չի նշանակում «զայրույթը՝ վրեժը թաքցնող», այլ՝ «խիստ զայրացած, ջղայնացած»: Mār dar āstin dāštan/parvarāndan չի նշանակում «զայրույթը թաքցնող» (էջ 42. բոց. Թեզանիքի մեջ օձ ունենալ/մեծացնել), այլ՝ «անզիտակցաբար դաստիարակել դավաճան կամ վտանգավոր թշնամուն և սիրել ու հոգ տանել նրա մասին»:

Ատենախոսության 43-րդ էջում նշվում է, որ պարսկերենում հանդիպում է *հավ* բաղադրիչով երկու դարձվածք: Սակայն պետք է նշել, որ պարսկերենում *հավ* բաղադրիչով դարձվածքները չեն սահմանափակվում միայն երկու դարձվածքով, այլ հանդիպում են մի շարք այլ դարձվածքներ: Օրինակ: Morq yek pā dārad «համառություն», Morq hamsāye qaz ast «ագահ, ագահություն» և այլն: Հարկ է նշել, որ ատենախոսության տարբեր հատվածներում, օրինակ եզրակացությունների բաժնում, նշվում է, որ «Պարսկերենում ածականական դարձվածքների ձևաբանական կարգերը հստակ արտահայտված չեն» /էջ 113/: Կարծում ենք նման կտրուկ եզրահանգումներ անելը հարմար չէ:



Ինչ վերաբերում է բուսանուններով կազմված դարձվածքների շարքում բերված az zir-e gol birun nayāmadān «փորձառու» /բոց.Ծաղկի տակից դուրս չգալ /Էջ 45/ օրինակին, ապա պետք է նշել, որ պարսկերենում նման դարձվածք չկա: Նույն օրինակը բերված է 65-րդ էջում: Ատենախոսը միևնույն ուղղագրությամբ պարսկերեն گل gel «ցեխ» բառը սխալմամբ گل gol «ծաղիկ» է հասկացել, քանի որ պարսկերեն կարճ ձայնավորները չեն գրվում, նման խնդիր է առաջ եկել: Վերոհիշյալ դարձվածքի ճիշտ ձևը և իմաստը հետևյալ ձևով է. از آب و گل بیرون در آمدن. Az āb o gel birun darāmadān /բոց. Ջրից և ցեխից դուրս գալ/, նշանակում է «մեծանալ»:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ հեղինակի հրատարակած թվով 7 հոդվածները բավարար չափով ներկայացնում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հռիփսիմե Վահեի Թորայանի «Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքներն արդի հայերենում և պարսկերենում» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետություն ԲՈԿ-ի Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված պահանջներին, նրա հեղինակն արժանի է Ժ.02.02. - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

**Բան. գիտ. թեկ., դոցենտ. Մոհամմադ Մալեք Մոհամմադի**

**Սպահանի համալսարան**

<http://fgn.ui.ac.ir/m.malekmohammadi>  
Email: [m.malekmohammadi@fgn.ui.ac.ir](mailto:m.malekmohammadi@fgn.ui.ac.ir)

08.05.2022

